ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0,ՀՀ,գ.Զանգակատուն

ՈՐՈՇՈՒՄ

№ 21 18.12.2019թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ № 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝
Հաստատել համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1. Զանգակատուն համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:
2. Զանգակատուն համայնքի ղեկավարի վարձատրության չափի, Զանգակատան համայնքապետարանի և <<Զանգակատուն համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմերի 2020 թվականի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
3. Զանգակատուն համայնքի 2020 թվականի վարչական բյուջեն հաստատելու մասին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈՂՄ՝

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Ա.Մայիլյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0,ՀՀ,գ.Զանգակատուն

ՈՐՈՇՈՒՄ

№ 22 Ն 18.12.2019թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ,13-րդ և 14-րդ հոդվածներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է՝

Սահմանել Զանգակատուն համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը՝համաձայն հավելվածի

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈՂՄ՝

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Ա.Մայիլյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված
Զանգակատուն համայնքի ավագանու 18.12.2019թ-ի թիվ 22-Ն որոշման

1. Զանգակատուն համայնքի տարածքում 2020թ.-ի համար տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը

1) Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման), (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր / դրամ:

բ/ սույն կետի ,,ա/,, ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9.000 /ինը հազար/ դրամ:
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:
- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30.000 /երեսուն հազար/ դրամ:

գ/ ոչ հիմնական շենքերի շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 /ինը հարյուր/ դրամ:
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 900 /ինը հարյուր/ դրամ:

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ:

1-ին, 2-րդ, 3-րդ կետերի համար կիրառված է 0,3 գործակիցը:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝60.000 /վաթսուն հազար/ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝30.000 /երեսուն հազար/ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 6000 / վեց հազար/ դրամ:

7)համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար,օրացուցային տարվա համար ՝ 15 000 /տասնհինգ հազար/ դրամ:

8) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 /երեք հազար / դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3900 /երեք հազար ինը հարյուր/ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 /վեց հազար / դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 /երեք հազար / դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3900 /երեք հազար ինը հարյուր/ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում՝ վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 /վեց հազար / դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 / տասնհինգ հազար/ դրամ.

9) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 105 /մեկ հարյուր հինգ/ դրամ մեկ քառակուսի մետրի համար:

10) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին, բաղնիքներին /սաունաներին/, ժամը 24^{00}- ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանվում է

ա/ առևտրի օբյեկտների համար 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 30.000 /երեսուն հազար/ դրամ:

գ/ բաղնիքների /սաունաների/ համար 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

դ/ խաղատների համար 300.000 /երեք հարյուր հազար/ դրամ:

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար 75.000 /յոթանասունհինգ հազար/ դրամ:

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար 45.000 /քառասունհինգ հազար/ դրամ:

11) Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա/ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 /երեք հազար /դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 /վեց հազար/ դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 /ինը հազար/ դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/դրամ.

բ/ ոչ հիմնական շինությունների ներսում.

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 /երեք հարյուր/դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 / վեց հարյուր/դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 /մեկ հազար երկու հարյուր /դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 /երկու հազար չորս հարյուր/ դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

12) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ պլակատային սպիտակի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 /վեց հարյուր/ դրամ:

բ/թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 /մեկ հազար հիսուն/ դրամ:

գ/ սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ

դ/ այլ արտաքին գովազդի համար՝ 450 /չորս հարյուր հիսուն/ դրամ:

ե/ դատարկ գովազդային վահանակների համար՝ այլ արտաքին գովազդի համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

զ/ եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդի համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

13) Համայնքի անվանումը,խորհրդանիշը,որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության,աշխատանքների կատարման,ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

14) Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ:

15) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

4-րդ կետից մինչև 15-րդ կետը ներառյալ կիրառված է 0.3 գործակից:

2. 2020թ.- համար Զանգակատուն համայնքի տարածքում տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը

Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1)Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10.000 /տասը հազար/ դրամ:

2) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ,համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ:

3) համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3000 /երեք հազար/ դրամ:

4)Զանգակատուն համայնքում սահմանել աղբահանության վճար՝

ա/ ֆիզիկական անձանց նկատմամբ մեկ շնչի հաշվով ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ:

բ/ իրավաբանական անձանց նկատմամաբ՝

գ/ առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 20 դրամ

դ/ արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 5 դրամ:

ե/ կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 2 դրամ:

5) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

6) համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ ամսական 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

7) համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճար սահմանել՝

ա/ անասնագլխաքանակի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:

բ/ անասնաբույժի մեկ կանչի համար ՝1000 / մեկ հազար դրամ/ :

8) համայնքի ենթակայության սառնարանային տնտեսության ծառայությունից օգտվողների համար՝ մեկ արկղ մրգի պահպանման համար տեղական վճար սահմանել 700 / յոթ հարյուր/ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԵԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0,ՀՀ,գ.Զանգակատուն

ՈՐՈՇՈՒՄ

№ 23 -Ն 18.12.2019թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ , ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետի հատկանիշներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Զանգակատուն համայնքի ղեկավարի վարձատրության չափը , Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զանգակատան համայնքապետարանի և <<Զանգակատուն համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-Ի աշխատակազմերի 2020թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի

Ավագանու անդամներ կողմ

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Ա.Մայիլյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ (ստորագրություն) Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Զանգակատուն համայնքի ավագանու 18.12.2019թ-ի թիվ 23-Ն որոշման

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ԵՎ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2020թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Համայնքի ղեկավար		250 000
1.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար / 1.2 - 1/	1	180 000
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / 3.1 -1/	1	135 000
Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / 3.2-1 /	1	100 000
Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ / 3.3-1 /	1	90 000
2.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Հարկահավաք	1	85 000
Մշակույթի տան տնօրեն	1	80 000
Գրադարանավար	1	75 000
3. ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Օպերատոր	1	80 000
Հավաքարար	1	80 000

«ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

2020թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 7
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Տնօրեն	1	120 000
Հաշվապահ	0.5	60 000
Դաստիարակ	1.12	105 000
Դաստիարակի օգնական	0.5	40 000
Դայակ	1	80 000
Խոհարար	1	90 000
Պահակ - այգեպան	1	75 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0,ՀՀ,գ.Զանգակատուն

ՈՐՈՇՈՒՄ

№ 24 -Ն 18.12.2019թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է՝

Հաստատել Զանգակատուն համայնքի 2020թ-ի վարչական բյուջեն՝

համաձայն հավելվածի

Ավագանու անդամներ կողմ

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Ա.Մայիլյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված
Զանգակատուն համայնքի ավագանու 18.12.2019թ-ի թիվ 24-Ն որոշման

Վարչական բյուջե

ՀՀ Արարատի մարզի Զանգակատուն համայնքի 2020թ. վարչական բյուջեի եկամուտները

h/h	*Եկամտատեսակները*	հազ.դրամ
	Ընդամենը եկամուտներ, այդ թվում	36 274.7
	1. Հարկեր և տուրքեր,այդ թվում	4 508.0
1/1	Գույքային հարկեր անշարժ գույքից,այդ թվում	
	Գույքահարկ շենքերի և շինությունների,որից	
	Ֆիզիկական անձանցից	
	Իրավաբանական անձանցից	
	Հողի հարկ,այդ թվում	
	Ֆիզիկական անձանցից	1 500,0
	Իրավաբանական անձանցից	
1/2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	2 900,0
1/3	Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում	
	Տեղական տուրքեր,որից՝	
	Շինությունների շինարարության թույլտվության համար,որից	
	Հիմնական շինությունների համար	
	Ոչ հիմնական շինությունների համար	
	Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն	
	Շինությունների քանդման թույլտվություն	
	Ծխախոտի վաճառքի թույլտվություն	48,0
	Խմիչքների իրացման համար	48,0
	Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար	12.0
	Բացօթյա վաճառքի համար	
	Վառելիքի վաճառքի համար	
	Ժամը 24^{00}-ից հետո աշխատելու համար	
	Արտաքին գովազդի համար	
	Տաքսի ծառայության թույլտվության համար	
1/4	Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման այլ պարտադիր վճարներ,այդ թվում	
	Պետական տուրքեր,այդ թվում	
	Զագս	
	Նոտար	
1/5	Այլ հարկային եկամուտներ /տույժեր և տուգանքներ/	
	2. Պաշտոնական դրամաշնորհներ,այդ թվում՝	27.266.7
2/5	Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/	27.266.7
	Այլ դոտացիա (փոխհատուցում)	
	Սուբվենցիա	
	3. Այլ եկամուտներ,այդ թվում	
3/3	Գույքի վարձակալությունից մուտքեր,որից՝	4.500,0
	Հողերի վարձակալություն	2.500,0
	Այլ գույքի վարձակալություն	
3/4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,այդ թվում՝	
	Պատվիրակված լիազորություններ	
3/5	Վարչական գանձումներ,այդ թվում	
	Տեղական վճարներ	1.300.0
	Շենքերի օրինականացման վճարներ	
	Ծնողական գումարներ	700.0
3/6	Մուտքեր տույժերից և տուգանքներից,այդ թվում	
	Վարչական իրավախախտումների համար	
	4. Վարչական բյուջեի մնացորդ,որն ուղղվում է նախորդ տարիների պարտքերի մարմանը	

Արարատի մարզի Զանգակատուն համայնքի 2020 թ. վարչական բյուջեի ծախսերը

հազ.դրամ	01.1.1.	01.6.1.	04.5.1.	05.1.1.	05.6.1.	08.6.1	09.1.1.	10.7.1.	10. 9.1	11.1.2		
	կառավ. ապար.	ընդհ. բնույթի հանր ծառայ	ճանապարհ. տրանսպորտ	աղբահանություն	Շրջակա միջ. Պահ	մշակույթ	նախադպրոցական կրթություն	սոց ապահովութ	Սոց ապահ տր. օգ ծառ	պահուստային ֆոնդ		Ընդամենը
4111- աշխատավարձ	14. 100.0											14 .100.0
4212- էներգետիկ ծառայություններ	2.000,0											2.000,0
4213-կոմունալ ծախսեր				1.000.0								1.000.0
4214- կապի ծառայություն	100.0											100.0
4215- ապահովագրական ծախսեր	55.0											55.0
4232- համակարգչային ծառայություններ	40.0											40.0
4234- հանրային տեղեկատվություն	100.0											100.0
4235- իրավաբանական ծառայություն	100,0											100,0
4237- կենցաղային ապրանքներ	400,0											400,0
4239- ընդհ.բնույթի այլ ծառայություններ	600.0				200,0	700.0						1.500.0
4241- մասնագիտական ծառայություն		300.0										300.0
4252- մեքենաների ընթացիկ նորոգում	600.0											600.0
4261- գրասենյակային նյութեր	200.0											200.0
4264- տրանսպորտային նյութեր	600.0		900.0	100.0								1 600.0
4269- հատուկ նպատակային այլ նյութեր						800.0						800.0
4639- դրամաշնորհ ՀՈԱԿ-ին							10.000.0					10.000.0
4726- թաղման ծախսեր								500.0				500.0
4729- այլ նպաստներ								600.0	200.0			800.0
4819- նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպութ.								150.0				150.0
4823- պարտադիր վճ.	15.0											15.0
4891- պահուստային միջոցներ										1.914.7		1.914.7
Ընդամենը	18.910.0	300.0	900.0	1.100.0	200.0	1.500.0	10.000.0	1.250.0	200.0	1.914.7		36.274.7

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՆԱԶԱՐՅԱՆ